Եվ անկախ իր բուն նպատակադրությունից՝ Դավրիժեցին չի մոռանում երբեմն որոշ տեղեկություններ հաղորդել իր այցելած բնակավայրերի մասին, այդպիսով՝ իր «լրագրողական հետաքննությանը» հաղորդելով նաև ***ուղեգրության*** բնույթ: Ինչպես՝ «Մերձ մայրաքաղաքին Նախչուանու կայ գաւառ մի, զոր անուանեն Շահբունուց ձոր, և յայսմ գաւառի կայ գիւղ մի՝ զոր անուանեն Օձոպի, և մերձ այսմ գեղջս կայ շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք մի յանուն սուրբ Աստուածածնին՝ զոր անուանեն Օձոպու վանք...» (էջ 336) և այլն:

Միջնադարյան հայ գրականության տարածման ու սերնդեսերունդ փոխանցման յուրահատկությունները պայմանավորել են ***ձեռագրերի հիշատակարանների***՝ իբրև ժանրային միավորների լիարժեք գոյության իրավունքը: Դրանք, այսպես ասած՝ ուղեկցող ժանրեր են և ենթակա են առավել ուշադիր սևեռումի: Դավրիժեցու պատմագրքում առկա են գրիչ Աթանասի և գրիչ Ավետիսի հիշատակարանները, ովքեր արտագրել են «Գիրք պատմութեանցը»: Սակայն ձեռագրերի հիշատակարաններ առկա են նաև բուն շարադրանքում: Պրպտող ու ուշադիր պատմիչ Դավրիժեցին իր պատմության համար նյութեր փնտրելիս շատ հաճախ է վկայագրում ձեռագրերի հիշատակարաններից քաղված տեղեկություններ, այդ կերպ, ակամա, ստեղծելով ներժանրային բազմազանություն՝ առիթ ստեղծելով այդ ժանրի մասին քիչ թե շատ համակարգված տվյալներ ունենալ՝ իր պատմագրքի պարագծում: Ճիշտ է, միշտ չէ, որ ձեռագրերի հիշատակարանները Դավրիժեցու պատմագրքում ամբողջական ներբերումներով են ներկայանում: «...Բազմաթիվ հիշատակագիրներ փորձում են այս կամ այն կերպ տալ ժամանակաշրջանի պատկերը, հաճախ ներհյուսելով դրան իրենց անձնական տառապանքներն ու ապրումները,– գրում է ժանրի ուսումնասիրողներից Հենրիկ Բախչինյանը:– Այդպիսով, հիշատակարանի մեջ առանձին տեղ է գրավում ***պատմական***